# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1
## «14» փետրվարի 2019 թ. թիվ ԲՆ-ԴԾ-19/07 պայմանագրի

**ք.Երևան** «18» «09» 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Հ.Հովակիմյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1136-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴԾ-19/07» ծածկագրով պայմանագրի 8.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴԾ-19/07» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1. Պայմանագրի 1.1 կետում **«127 406 100 (մեկ հարյուր քսանյոթ միլիոն չորս հարյուր վեց հազար հարյուր)»** բառերը փոխարինել **«182 861 200 (մեկ հարյուր ութսուներկու միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր)»** բառերով.

1.1 2. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածներ №1-ը և №2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածներ №1-ի և №2-ի,

1 1 3. «բնապահպանության» բառը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով:

### 2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի Հավելվածներ №1-ը և №2-ը հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը. Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ** | **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ** |
|---|---|
| **Շրջակա միջավայրի նախարարություն** | **«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ** |
| ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք Վեդի, Կայան 79 |
| ՖՆ գործառնական վարչություն | ՖՆ գործառնական վարչություն |
| ՀՀ 900011007821 | ՀՀ 900018002056 |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 04108656 |
| Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ | «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ի տնօրեն |
| **Վ. Ջիլավյան** | **Հ. Հովակիմյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված №1
«18» «09» 2019թ. կնքված
համաձայնագիր №1
№ ԲՆ-ԴԾ-19/07 պայմանագրի

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**
Շրջակա միջավայր նախարարության
գլխավոր քարտուղարի ժ/պ
**Վ.Ջիլավյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի
տնօրեն
**[illegible]**
Կ.Տ.

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| NN p/կ | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջնա-ժամկետը | պահանջվող գումարը (դրամ) |
| 1 | Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն | Պետական արգելոցի և պետական արգելավայրերի տարածքներում և նրանց պահպանման գոտիներում՝<br>ա) պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում,<br>բ) հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն,<br>գ) պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում (23359 8հա) | Պահպանության միջոցառումներ աշխատակիցների կողմից պետական արգելոցի և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով, բացատրական և քարոզչական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն<br>Հակահրդեհային միջոցառումների իրականացում | Պատշաճ պահպանություն, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում, հակահրդեհային տեխնիկական միջոցներով ապահովում | 31.12.2018թ. | **117 998 100** |
| 2 | Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ | Պետական արգելոցի և արգելավայրերի տարածքներում էկոտուրիզմի զարգացման ծրագրերի իրականացում | Աջակցություն էկոտուրիզմ իրականացնող կազմակերպություններին, էկոտուրիստական երթուղիների բարեկարգում, զբոսաշրջիկներին տրամադրվող ծառայությունների ընդլայնում | Տուրիստական կազմակերպությունների հետ պայմանագրերի առկայություն, զբոսաշրջիկների սպասարկում | 31 12 2018թ. | **1 848 000** |
| 3 | Գիտական միջոցառումներ | ա) Խոշոր կաթնասուն կենդանիների հաշվառում<br>բ) Որոշ տեսակների գիշատիչ թռչունների թվաքանակի և տեսակային կազմի որոշում<br>գ) Սողունների որոշ տեսակների տարածվածության և դրանց քարտեզագրման աշխատանքների իրականացում<br>դ) [illegible] Ազատ գետերի որոշ ձկնատեսակների [illegible] /կարմրախայտ, քոռի բեղլու/· | Դիտարկումների և հաշվառումների իրականացում գիտահետազոտական միջոցառումների միջոցով:<br>Բույսերի և կենդանիների որոշ տեսակների աճելավայրերի, ապրելավայրերի ուսումնասիրություններ, տեսակային կազմի ճշգրտում, ցանկերի կազմում և տեղեկատվական բազայի ստեղծում.<br>Թանգարանային ցուցանմուշների | Վերլուծության և մոնիտորինգի իրականացման միջոցով հավաստի տվյալների ձեռքբերում, ձկնատեսակների առկա իրավիճակի գնահատում. Բույսերի և կենդանիների տեսակային կազմի ճշգրտված ցանկեր· Գիտական միջոցառումների | 31 12 2018թ. | **7 560 000** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ե)Հավաքված բուսատեսակների (հերբարիումների) գույքագրում, տեսակային կազմի որոշում և քարտադարանի ստեղծում:<br>զ)Պետական արգելոցի թանգարանի և գիտական լաբորատորիայի աշխատանքների կազմակերպում և իրականացում. | պահպանություն, խնամք և ցուցադրում | հաշվետվությունների թիվը 4 (չորս).<br>Բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների պատշաճ ցուցադրում | | |
| 4 | 2018-2019թթ հարկային պարտավորություններ | Ձևավորված հարկային պարտավորությունների մարում | Ավելացված արժեքի հարկի և հաշվարկված տույժերի վճարում | Մարված հարկային պարտավորություններ | | **55 455 100** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | **182 861 200** |

Հավելված №2
«18» «09» 2019թ. կնքված
համաձայնագիր №2
№ ԲՆ-ԴՇ-19/07 պայմանագրի

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ | «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրեն |
| Վ.Ջիլավյան | Ռ. Հովակիմյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

## ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

| Ծրագրի դասիչը՝ | 1155 | Ցուցանիշներ | | | |
|---|---|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը՝ | 11007 | Առաջին եռամսյակ | Առաջին կիսամյակ | Ինն ամիս | Տարի |
| Միջոցառման անվանումը՝ | «Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության՝ գիտական ուսումնասիրությունների կատարում | | | | |
| Նկարագրությունը՝ | «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում պահպանության՝ գիտական ուսումնասիրությունների՝ անտառապետեսական աշխատանքների իրականացում | | | | |
| Միջոցառման տեսակը՝ | Ծառայությունների մատուցում | | | | |
| Միջոցառումն իրականացնողի անվանումը՝ | Մասնագիտացված կազմակերպություններ | | | | |
| Արդյունքի չափորոշիչներ | | | | | |
| ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանվող տարածք, հա | | 23359.8 | 23359 8 | 23359 8 | 23359.8 |
| Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների թիվ, հատ | | 1 | 2 | 3 | 4 |
| Որսագողության դեպքերի քանակի նվազում, տոկոս | | | | | 10 |
| Ապօրինի ծառահատումների քանակի նվազում, տոկոս | | | | | 8 |
| Բնական և մարդածին աղետների կանխարգելման կարողություն,տոկոս | | | | | 60 |
| **Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)** | | **31 851.5** | **63 703.1** | **151 009.7** | **182 861.2** |